ՀԱՅԿ Շ. ՄԱՀՏԵՍՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՅԱՆ ԶԵՄՍՏՎԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ (1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14–15)

Բանալի բառեր՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտե, զեմստվո, վարչատարածքային բաժանում, նախագիծ, հանձնաժողով, կուսակցություն, բանաձև, քվեարկություն, նահանգներ, գավառներ:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի վարչատարածքային բաժանման խնդիրը դառնում է ամենաքննարկվող հարցերից մեկը: Այդ հարցի լուծումից էր կախված երկրամասում զեմստվային հաստատությունների կազմումն ու ներմուծումը, բարեփոխումների իրականացումը, Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի ընտրությունների նախապատրաստումն ու անցկացումը, ազգային տարածքների սահմանագծումը և ազգային հարցի լուծումը: Թեմայի ուսումնասիրությունն այսօր արդիական է, քանի որ սահմանային վեճերը, որոնք ժառանգություն ենք ստացել Ցարական Ռուսաստանի վարած քաղաքականության արդյունքում, և որի հետևանքներից է տարածաշրջանում պարբերաբար կրկնվող ռազմական բախումները, հնարավոր կլիներ լուծել դեռևս 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո հարցի վերաբերյալ անցկացվող

խորհրդակցություններում, որոնցից առանձնահատուկ դեր ուներ 1917 թ. հոկտեմբերի 14–15-ին Թիֆլիսի զեմստվային խորհրդակցությունը: Այն նշանակալից էր ինչպես մասնակիցների քանակով և հասարակական-քաղաքական ուժերի ընդգրկվածության առումով, այնպես էլ խորհրդակցության առջև դրված խնդիրներով, որոնց լուծումով, փաստորեն, կփակվեր ազգային հարցի խնդիրն Անդրկովկասում: Այդ ամենի համար ստեղծվել էին բացառիկ պայմաններ, սակայն վրաց-թաթարական քաղաքական ուժերի ջանքերով հարցն այդպես էլ լուծում չի ստանում, ինչի մասին կներկայացնենք ստորև:

1917 թ. մայիսին Պետրոգրադում Համառուսաստանյան ժամանակավոր Կառավարությանը կից կազմվում է Հատուկ խորհրդակցություն[1], որը պետք է զբաղվեր Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի գումարման նախապատրաստման աշխատանքներով: Խորհրդակցությանը մասնակցելու համար Ռուսաստանի բոլոր ազգություններից ներկայացուցիչներ են հրավիրվում Պետրոգրադ, որոնք մասնակցում են ինչպես Հատուկ խորհրդակցության, այնպես էլ Ժամանակավոր կառավարության ներքին գործերի նախարարությանը կից գործող տեղական ինքնակառավարման և կառավարման հանձնաժողովի նիստերի աշխատանքներին, որոնց ընթացքի վերաբերյալ պարբերաբար տեղեկացնում էին Անդրկովկասում ժամանակավոր իշխանություն հանդիսացող Անդրկովկասյան հատուկ կոմիտեին[2]: Աշխատանքների ընթացքում պարզվում է, որ Անդրկովկասում անհրաժեշտ է սահմանների նոր բաժանում իրականաց-

[1] «Вестник Временнаго Правительства», Петроград, 25-ого мая, 1917, N 62 (108).

[2] «Համբաւաբեր», Թիֆլիս, յուլիսի 2, 1917, N 25:

նել[3], առանց որի հնարավոր չէր լինի երկրամասում լուծել ազգային հարցը, ներմուծել տեղական ինքնակառավարման հիմնարկություններ, կատարել բարեփոխումներ և այլն: Այդ ամենի վերաբերյալ ևս հայտնվում է Անդրկովկասյան հատուկ կոմիտեին՝ շեշտելով, որ անդրկովկասյան գլխավոր ազգությունների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի կողմից կազմվել է երկրամասի վարչատարածքային բաժանման նախագիծ, որը կուղարկվի տեղական իշխանությունների և հասարակական-քաղաքական ուժերի քննարկմանն ու եզրակացությանը Ժամանակավոր կառավարության ներքին գործերի նախարարության կողմից հաստատվելուց հետո[4]:

Հանձնաժողովի աշխատանքներին հայ պատվիրակները ներկայացել էին բավականին պատրաստված, որոնք իրենց հետ ունեին արդեն պատրաստի վարչատարածքային բաժանման նախագիծ՝ կազմված ազգային սկզբունքի հիման վրա: Հատուկ, տեղական ինքնակառավարման և կառավարման հանձնաժողովների կողմից ընդունված նախագծի համար հիմք է հանդիսանում հայ պատվիրակների կողմից ներկայացված նախագիծը[5]: Այն հաստատվում է Ներքին գործերի նախարարության կողմից և ստանում «նախարարական ծրագիր» անվանումը[6]: Պետք է նշել, որ նախագիծն ամբողջությամբ հավանության է արժանանում հայ, վրացի, մասամբ նաև թաթար պատվիրակների կողմից, որոնք իրենց առարկությունները հիմնավորում էին ոչ թե ազգային սկզբունքի տեսանկյունից, այլ բացառապես տնտեսական և տեխնիկական գործոններով: Օրինակ՝ նրանք

[3] «Հորիզոն», Թիֆլիս, 30 սեպտեմբերի, 1917, N 209:
[4] «Тифлисский Листок», Тифлис, N 156, 15-го июля, 1917:
[5] «Յառաջ», Բաքու, 10 հոկտեմբերի, 1917, N 12:

ևս ընդունում էին վարչատարածքային նոր բաժանման անհրաժեշտությունը, սակայն առարկության շեշտը դնում էին ջրօգտագործման, քոչի, անտառտնտեսության և այլ հարցերի լուծման անհրաժեշտության վրա, որոնք ունեին տեխնիկական բնույթ և լուծելի էին: Հետագայում կտեսնենք, որ և՛ վրացիները, և՛ թաթարները կհրաժարվեն իրենց իսկ կողմից ընդունված նախագծից: Նշյալ թեմայով ուսումնասիրությունները բավականին սակավ են, իսկ վրացի և ադրբեջանցի պատմաբաններն ու քաղաքական գործիչներն ընդհանրապես աշխատում են այս թեմային չանդրադառնալ՝ հուսալով, որ այն մոռացության կմատնվի: Սակայն արխիվային փաստաթղթերի առկայությունը ու դրանց ուսումնասիրությունը նոր լույս են սփռում հարցի վերաբերյալ: Որպես ասվածի ապացույց՝ բավական է նշել այն փաստը, որ այդ օրերին Պետրոգրադյան խորհրդակցության մասնակից, վրաց պատվիրակության և տեղական ինքնակառավարման ու կառավարման հանձնաժողովի վարչատարածքային բաժանման ենթահանձնաժողովի նախագահ Զուրաբ Ավալովն իր հուշերում չի անդրադառնում այդ ամենին՝ բավարարվելով միայն տողատակում ավելացնելով այն մասին, որ ինքը չի ցանկանում անդրադառնալ Պետրոգրադյան խորհրդակցություններին[7], չնայած, որ հենց նրա գլխավորած պատվիրակությունն ընդունում է այդ նախագիծը:

Նախագծի ընդունումից հետո 1917 թ. օգոստոսի 13-ին Պետրոգրադում Կովկասի գործերի կոմիսար Վլադիմիր Նաբոկովն այն Անդրկովկասի հատուկ կոմիտեի քննությանն ու եզրա-

---

[6] «Մշակ», Թիֆլիս, 13 օգոստոսի, 1917, N 170:

[7] **Авалов З.,** Независимость Грузии в международной политике 1918–1921 гг.: Воспоминания. Очерки, Париж, 1924, с. 8.

կացությանն է ուղարկում՝ պատասխանի համար սահմանելով մեկամսյա ժամկետ[8]: Ըստ ընդունված նախագծի՝ Արևելյան Անդրկովկասը բաժանվելու էր երկու մասի՝ թաթարական և հայկական: Գանձակի նահանգը կազմվելու էր Ղազախ, Գանձակ, Ջիվանշիր, Շուշի գավառների լեռնային հայաբնակ մասերից, Զանգեզուրի գավառն ամբողջապես՝ բացառությամբ Բարգուշատի հովտի մահմեդականներով բնակեցված մի քանի գյուղական հասարակությունների, որոնք միացվելու էին Կարյագինի թաթարական գավառին: Կարյագինի հայկական մասը միացվելու էր Շուշիի գավառին: Գանձակ քաղաքը բաժանվելու էր երկու մասի՝ հայկական և թուրքական, Երևան նահանգի Ալեքսանդրապոլի գավառը դառնալու էր առանձին նահանգ, որին միանալու էին Կարսի մարզի Կարսի և Կաղզվանի շրջանները, Թիֆլիսի նահանգի կազմում գտնվող Լոռու շրջանը, Ախալքալաքի գավառը, Ծալկայի հայկական գյուղերը: Երևանի նահանգի մնացած գավառներում ևս նախատեսվում էր իրականացնել որոշ ներքին փոփոխություններ[9]:

Պետրոգրադից ստանալով նախագիծը՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեին կից ձևավորվում է վարչատարածքային բաժանման հանձնաժողով՝ Նոյ Ժորդանիայի գլխավորությամբ, որի կազմում ընդգրկվում են ներկայացուցիչներ անդրկովկասյան երեք ազգություններից՝ յուրաքանչյուրից հինգական անձ[10]: Հանձնաժողովի աշխատանքների ընթացքում նախագծի քննարկման և ընդհանուր եզրակացություն գալու հարցը ձգձգվում է վրաց-թաթարական ներկայացուցիչների անհիմն,

[8] «Հորիզոն», 30 սեպտեմբերի, 1917, N 209:
[9] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 375, ց. 1, գ. 69, թ. 3–20:
[10] «Кавказское Слово», Тифлис, 29-ое августа, 1917, N 190:

մերժողական դիրքորոշման պատճառով, որոնք շատ հաճախ նույնիսկ չէին էլ ներկայանում նիստերի աշխատանքներին[11]: Ի վերջո, հոկտեմբերին Ժամանակավոր կառավարության ճնշմամբ հարցին լուծում տալու համար հրավիրվում է Անդրկովկասյան հատուկ կոմիտեին կից զեմստվային խորհրդակցություն:

Անդրկովկասյան հատուկ կոմիտեի 1917 թ. հոկտեմբերի 11-ի նիստին վարչատարածքային բաժանման հանձնաժողովի անդամները կարճ ելույթներ են ունենում Անդրկովկասի վարչատարածքային բաժանման հարցի շուրջ ընթացող աշխատանքներին ընդհանուր համաձայնության գալու անհնարինության վերաբերյալ: Որոշվում է վարչատարածքային բաժանման հանձնաժողովի անդամների առավել մանրամասն զեկույցները քննարկել հոկտեմբերի 14-ին կայանալիք զեմստվային խորհրդակցության ժամանակ, որն իր նշանակությամբ կլիներ ամենակարևորներից մեկն Անդրկովկասի ներքաղաքական կյանքում[12]: Բացի Անդրկովկասյան հատուկ կոմիտեի և վարչատարածքային բաժանման հանձնաժողովի անդամներից, խորհրդակցությանը մասնակցելու համար հրավերներ են ուղարկվում ազգային խորհուրդներին, քաղաքական կուսակցություններին, երկրային խորհուրդներին, Թիֆլիսի քաղաքային դումային[13]:

1917 թ. հոկտեմբերի 14-ին բացվում է Անդրկովկասյան հատուկ կոմիտեին կից զեմստվային խորհրդակցության առաջին նիստը՝ Ա. Չխենկելու նախագահությամբ, որին ներկա էին Մ. Ջաֆարովը, Մ. Պապաջանյանը, Երկրային կենտրոնների,

---

[11] ՀԱԱ, ֆ. 375, ց. 1, գ. 70, թ. 1–8:
[12] Վրաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՎԱԱ), ֆ. 2080, ց. 1, գ. 12, թ. 142:
[13] «Кавказское Слово», 14-ое октября, 1917, N 229:

Թիֆլիսի քաղաքային դումայի և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Նիստը չնայած ուներ կուսակցական կազմ, սակայն կրում էր ազգային բնույթ: Սկզբում ելույթ է ունենում վարչատարածքային բաժանման հանձնաժողովի քարտուղար, սոցիալ-դեմոկրատ Ղազար Տեր-Ղազարյանը, ով ներկայացնում է կատարված աշխատանքների արդյունքները: Նա հայտնում է, որ երկուսուկես ամսվա ընթացքում վարչատարածքային բաժանման հարցի շուրջ հանձնաժողովում ընդհանուր համաձայնություն չի կայացվել, բացի մի քանի կետերի շուրջ՝ օրինակ բերելով այն, որ եթե մի կողմից մահմեդականներն ընդվզում են Ելիզավետպոլի նահանգը Գյանջա գետով երկու՝ հայկական և մահմեդականական շրջանների բաժանման դեմ, ապա մյուս կողմից, անհրաժեշտ են համարում նահանգը վարչատարածքային բաժանման ենթարկել կանտոնային եղանակով: Ղ. Տեր-Ղազարյանն առաջարկում է թաթարների կողմից ներկայացվող հիմնական առարկելի հարցերի վերաբերյալ (ինչպիսիք են՝ արոտավայրերի, ջրօգտագործման, քոչի, անտառտնտեսության) ստեղծել միջկանտոնալ խորհուրդ: Անցնելով Երևանի նահանգին՝ նշում է, որ նրա շուրջ համաձայնություն ընդհանրապես չի կայացվել, իսկ վրացիներն էլ ընդվզում են Թիֆլիս նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառներն Ալեքսանդրապոլի նահանգի միացման դեմ՝ չնայած պետրոգրադյան խորհրդակցություններին արդեն տվել էին իրենց համաձայնությունը[14]:

Ղ. Տեր-Ղազարյանի ելույթից հետո Ա. Չխենկելին հայտնում է Ժամանակավոր կառավարության ներքին գործերի նախարա-

[14] ՎԱԱ, ֆ. 2080, ց. 1, գ. 13 թ. 147:

ությանը կից հատուկ երկրային խորհրդակցության նախագահ Բորիս Վեսելովսկու առաջարկի մասին[15], ըստ որի պետք է անհապաղ զեմստվային հիմնարկություն մտցվեր Անդրկովկասի այն նահանգներում, որտեղ գոյություն չուներ վիճելի տարածքներ՝ հետաձգելով մնացած գավառներում զեմստվոների ներմուծումը մինչև տարածքային հարցերի վերջնական լուծումը, ինչը Չխենկելին անընդունելի էր համարում, քանի որ, ըստ նրա, եթե սպասեին վերջնական համաձայնության, ապա Անդրկովկասի մեծ մասը երկար ժամանակ կմնար առանց զեմստվոյի և բարեփոխումների: Այդ պատճառով առաջարկում է Անդրկովկասի ոչ վիճելի տարածքներում անհապաղ ներմուծել զեմստվո, իսկ վիճելի շրջաններում ներմուծել մաս-մաս՝ Սահմանադիր ժողովի ընրություններից հետո սահմանների շուրջ ընդհանուր համաձայնություն ձեռք բերելուն զուգահեռ: Այդ կապակցությամբ պետք էր անհապաղ միջնորդություն ուղարկել Ժամանակավոր կառավարությանը՝ միաժամանակ չդադարեցնելով վարչատարածքային բաժանման նախագծի քննարկման աշխատանքները:

Չխենկելու առաջարկին դեմ են հանդես գալիս հայ և ռուս ներկայացուցիչները՝ դաշնակցականներ Խաչատուր Կարճիկյանը, Ավետիք Շահխաթունյանը, Գևորգ Խատիսյանը, սոցիալ-դեմոկրատ Ղ. Տեր-Ղազարյանը, սոցիալիստ-հեղափոխական Արշամ Խոնդկարյանը, Ֆյոդր Լեբեդևը, Ժողովրդական ազատություն կուսակցության ներկայացուցիչներ իշխ. Գևորգ Թումանովը, Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը և այլք[16], ովքեր գտնում էին, որ Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի գումարումից հետո վարչատարածքային սահմանների փոփոխության հարցը

[15] «Республика», Тифлис, 14-ого октября, 1917, N 80:
[16] ՎԱԱ, ֆ. 2080, ց. 1, գ. 13, թ. 149:

հնարավոր չի լինի իրականացնել Անդրկովկասյան հատուկ կոմիտեի միջոցով, քանի որ ստիպված կլինեին սպասել նոր օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների ձևավորմանը, ինչն էլ կհետաձգեր հարցի լուծումը դարձյալ անորոշ ժամանակով: Հայ պատվիրակներն առաջարկում էին առաջին հերթին իրականացնել վարչատարածքային բաժանումներ՝ հարցի շուրջ համաձայնության գալով, գտնելով որ չի կարելի տարանջատել զեմստվոյի հարցը վարչատարածքային բաժանումների հարցից, իսկ նոր հանձնաժողով կազմելն անիմաստ էին համարում, քանի որ նրանում ևս նույն խնդիրներն առաջ կգային: Գ. Խատիսյանը հիշեցնում է, որ դեռևս Պետրոգրադի խորհրդակցությունում համաձայնություն է կայացել, ինչպես հայ-մահմեդականական, այնպես էլ հայ-վրացական հարաբերությունների տեսանկյունից:

Մենշևիկ Ա. Չխենկելու առաջարկն աջակցություն է գտնում ինչպես վրացիների, այնպես էլ թաթարների կողմից, որոնք ևս հանդես են գալիս ելույթներով և առաջարկություններով: Վրաց ազգային-դեմոկրատներ Գեորգի Մաչաբելին, Գեորգի Գվազավան պահի հրամայականն են համարում անհապաղ Անդրկովկասի ոչ վիճելի տարածքներում զեմստվոյի ներմուծման անհրաժեշտությունը, իսկ սպասել սահմանների շուրջ համաձայնության գալուն մինչև Սահմանադիր ժողովի գումարումը, անհնար են համարում: Մուսավաթական Լյուֆթալի բեյ Բեհբութովը, մահմեդականական սոցիալիստական բլոկի անդամ Ահմեդ բեյ Պեպինովը, թաթար սոցիալ-դեմոկրատական «Հումմեթ» կուսակցության ներկայացուցիչ Ակպեր աղա Շեյխ ուլ Իսլամովը հայտարարում են, որ մահմեդականները պատրաստ չեն լուծելու վարչատարածքային բաժանման հարցը, քանի որ նրա շուրջ

համաձայնության գալն այդ պահին անհնար է և դարձյալ միանում են Ա. Չխենկելու առաջարկին: Այնուհետև ելույթ է ունենում անդրկովկասյան մահմեդականական կենտրոնի ներկայացուցիչ Խուդադաթ բեյ Մելիք-Ասլանովը, ով իր և մահմեդական մտավորականության անունից իրեն իրավունք է վերապահում հայտարարել, որ նախարարական ծրագիրն անընդունելի է և պաշտպանում է Չխենկելու առաջարկը, իսկ վարչատարածքային բաժանման հարցի վերաբերյալ առաջարկում է նոր քննարկումներ ծավալել: Անդրկովկասում հրեաների ներկայացուցիչ Մատվեյ Գրուզենբերգը, Միացյալ լեռնցիների միության ներկայացուցիչ Թաղո-Գադին ևս պաշտպանում են Ա. Չխենկելու առաջարկը:

Քննարկումներից հետո նոր առաջարկությամբ են հանդես գալիս բոլշևիկ Ֆիլիպ Մախարաձեն, կադետ, իշխան Գ. Թումանովը, մենշևիկ Նոյ Ռամիշվիլին, սոցիալ-դեմոկրատ Ղ. Տեր-Ղազարյանը:

Ֆ. Մախարաձեն գտնում էր, որ վարչատարածքային բաժանման հարցերի շուրջ քննարկումները հանձնաժողովներում անօգուտ են, քանի որ վիճելի հարցերը պետք է լուծվեն տեղերում՝ առաջարկելով Անդրկովկասում զեմստվո ներմուծել ամենուր և միաժամանակ, իսկ սահմանների հարցը տեղերում լուծել:

Մենշևիկ Ն. Ռամիշվիլին ևս պաշտպանում է Ա. Չխենկելու առաջարկը՝ այն տարբերությամբ, որ հրաժարվում էր նահանգային զեմստվոյից ընդհանրապես՝ կողմնակից լինելով երկաստիճան՝ վոլոստային (շրջանային) և գավառական զեմստվոների:

Գ. Թումանովը հանդես է գալիս Ա. Չխենկելու առաջարկի դեմ՝ գտնելով, որ անհապաղ, միաժամանակ և ամենուր պետք է ներմուծվի շրջանային զեմստվո՝ վերջիններին հնարավորութ-

յուն ընձեռնելով միավորվելու միությունների մեջ: Նա գտնում է, որ վարչատարածքային փոփոխությունների հարցը իշխանությունների խնդիրն է, իսկ առանց զեմստվոյի գոյատևելն անհնար է, քանի որ զեմստվոն այն հիմքն է, առանց որի անհնար կլինի կազմակերպել հասարակական-քաղաքական կյանքը:

Ղ. Տեր-Ղազարյանն էլ հայտնում է, որ նախարարական ծրագիրն ամբողջությամբ ընդունում է, այն «իրենը համարելով», քանի որ նրանում էր տեսնում ազգային հարցի լուծման բանալին՝ առաջարկելով այն անմիջապես ընդունել՝ իրականացնելով վարչատարածքային փոփոխությունները, իսկ հետո նոր միայն զեմստվային հիմնարկություններ ներմուծել երկրամասում[17]:

Ա. Չխենկելու, Ղ. Տեր-Ղազարյանի, Գ. Թումանովի և Ֆ. Մախարաձեի կողմից առաջարկված բանաձևերի քվեարկությունը կադետ Գ. Մելիք-Ղարագյոզյանի առաջարկությամբ հետաձգվում է հաջորդ նիստին, որը տեղի է ունենում հոկտեմբերի 15-ին: Նիստը դարձյալ նախագահում էր Ա. Չխենկելին: Նիստի սկզբին նոր բանաձևով հանդես է գալիս Ա. ա. Շեյխ ուլ Իսլամովը, ով առաջարկում է իր կազմած վարչատարածքային բաժանման ծրագիրն ընդունել որպես հիմք Անդրկովկասում վարչատարածքային բաժանումներ իրականացնելու համար: Այնուհետև անցնում են առաջարկությունների քվեարկությանը:

Ֆ. Մախարաձեն նշում է, որ բոլոր առաջարկություններն ունեն ընդհանուր մի դրույթ՝ Անդրկովկասում անհապաղ զեմստվոների ներմուծման վերաբերյալ օրենքի կազմում և հրապարակայնացում Ժամանակավոր կառավարության կողմից, ավելացնում, որ տարածայնությունները գլխավորապես վարչատարած-

[17] Նույն տեղում, թ. 149:

քային բաժանումների վերաբերյալ են: Ապա առաջարկում է քննարկել և քվեարկել առաջարկություններն առանձին կետերով՝ հիմք ընդունելով Ա. Չխենկելու բանաձևը:

Ղ. Տեր-Ղազարյանը հայտնում է, որ Չխենկելու բանաձևի որոշ կետեր իր համար ընդունելի են և նա կքվեարկի ի օգուտ նրանց, այն պայմանով, որ իր բանաձևն էլ քվեարկության դրվի:

Քվեարկության արդյունքում բանաձևն ամբողջությամբ ընդունվում է 23 կողմ և 9 դեմ ձայների հարաբերակցությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. Ժամանակավոր կառավարության դեկրետով ամբողջ Անդրկովկասում անհապաղ մտցվելու էր զեմստվային դրություն:

2. Ժամանակավոր կառավարության դեկրետով հանձնարարվում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտեին անհապաղ զեմստվո մտցնել այն նահանգներում, մարզերում և գավառներում, ուր վարչական սահմանների հարց չէր առաջանա:

3. Ժամանակավոր կառավարության դեկրետով վիճելի շրջաններում զեմստվոյի ներմուծման նախապայման համարվելու էր վարչատարածքային սահմանների փոփոխությունները[18]:

4. Վիճելի նահանգներում, մարզերում և գավառներում Անդրկովկասյան հատուկ կոմիտեին իրավունք էր վերապահվում մտցնելու մանր շրջանային զեմստվո՝ միաժամանակ լուծելով վարչատարածքային բաժանման հարցի ամեն մի առանձին դեպք:

5. Ժամանակավոր կառավարության դեկրետով վիճելի շրջանների վարչատարածքային բաժանման ծրագրի մշակումը

[18] Վիճելի շրջաններ էին համարվում ամբողջ Երևանի նահանգը, Ելիզավետպոլի նահանգը՝ բացի Նուխու և Արեշի գավառներից, Կարսի մարզի Կարսի և Կաղզվանի շրջանները, Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները:

հանձնարարում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտեին՝ տեղերում վիճելի հարցերը լուծելու իրավունքով:

6. Ժամանակավոր կառավարության դեկրետի հրատարակումից մեկ ամսվա ընթացքում Անդրկովկասի վարչատարածքային սահմանների փոփոխության հարցի շուրջ տեղերում համաձայնության գալուց հետո երկրամասում պետք է մտցվեր տեղական ինքնակառավարման մարմիններ, որն էլ կհաստատվեր Ժամանակավոր կառավարության կողմից:

Ղ. Տեր-Ղազարյանն առաջարկում է պայմանավորվածության համաձայն քվեարկության դնել նաև իր բանաձևը, ինչը մերժվում է 22 դեմ, 10 կողմ ձայների հարաբերակցությամբ: Այդ ժամանակ Խ. Կարճիկյանը Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության անունից հայտարարում է, որ ստեղծված դրությունում իրենք հրաժարվում են շարունակել վարչատարածքային բաժանման վերաբերյալ տարվող աշխատանքներին հետագա մասնակցությունից, և որպես բոյկոտ լքում են նիստերի դահլիճը:

Չնայած այն հանգամանքին, որ այդ խորհրդակցության գլխավոր նպատակն Անդրկովկասում ազգային հարցի լուծման համար հիմք հանդիսացող վարչատարածքային բաժանման խնդրի լուծումն էր, սակայն, ինչպես տեսանք, այն վրաց և թաթար ներկայացուցիչների ջանքերով հետաձգվում է անորոշ ժամանակով: Պատճառն այն էր, որ նրանց ձեռնտու էր գոյություն ունեցող վարչատարածքային միավորներն առանց փոփոխությունների, քանի որ ամենուր կազմելով մեծամասնություն Սահմանադիր ժողովի ընտրությունների արդյունքում կունենային ավելի մեծ թվով պատգամավորներ և կկարողանային անցկացնել իրենց կողմից առաջարկված նախագծերը, իշխանության մարմիններում կլինեին գերիշխող, իսկ ազգային սահմանների

գծման դեպքում իրենց տարածքները կկազմվեին ի հաշիվ հայկական պատմական հողերի: Հայերի համար հարցը կենսական նշանակություն ուներ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերն Անդրկովկասի ընդհանուր թվով 55 գավառներում, մարզերում, շրջաններում միայն Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Էջմիածնի, Ախալքալակի և Շուշիի գավառներում էին մեծամասնություն կազմում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ նիստի հաջորդ օրը՝ հոկտեմբերի 16-ին, Անդրկովկասյան հատուկ կոմիտեի որոշմամբ վարչատարածքային սահմանների փոփոխության հանձնաժողովի անդամ Ա. աղա Շեյխ ուլ Իսլամովը, ով պարբերաբար բացակայում էր հանձնաժողովի նիստերի աշխատանքներից, Անդրկովկասում զեմստվային աշխատանքների գործում ունեցած հատուկ ավանդի համար ստանում է 900 ռուբլի պարգևավճար[19], ինչից կարելի է ենթադրել, որ նա հատուկ դերակատարում է ունեցել հարցի ձախողման համար տարվող աշխատանքերում:

Խորհրդակցությունը մեծ արձագանք է ունենում առաջադեմ հասարակության և հասարակական-քաղաքական տարբեր ուժերի և պարբերական մամուլի կողմից, որոնք իրենց դժգոհությունն էին արտահայտում Ժամանակավոր կառավարությանն ու Անդրկովկասյան հատուկ կոմիտեին ուղղված բազմաթիվ գրություններում, քանի որ հարցի լուծման ձգձգումն ու վրաց-թաթարական ուժերի ապակառուցողական դիրքորոշումը հարցի լուծման նկատմամբ տարածաշրջանում կհանգեցներ նոր կոնֆլիկտների և ռազմական բախումների, ինչի ականատեսն ենք մինչև այսօր:

[19] ՎԱԱ, ֆ. 2080, ց. 1, գ. 13, թ. 166:

Гайк Ш. Магтесян, *Институт истории НАН РА,* **Вопрос административно-территориального деления Закавказья в обсуждениях земского совещания (1917 г., 14–15 октябрь).**

Летом 1917 г. Министерство внутренних дел Временного правительства направило на обсуждение местных властей проект об административном переделе Закавказского края. Этой целью при ОЗАКОМ-е созывается Особая комиссия, где на земском совещании вопрос рассматривается. Из-за большинства грузин и татар на совещании принимаются антиармянские резолюции.

Hayk Sh. Mahtesyan, *Institute of History of the NAS RA,* **The Issues of Administrative and Territorial Divisions of the Transcaucasus in the Discussion of the Zemstvo Sessions (14–15 October, 1917).**

In the summer of 1917 the Ministry of Internal Affairs of the Provisional Government submitted a draft on the administrative redistribution of the Transcaucasian territory for discussion by local authorities. For this purpose, the Special Commission is convened under OZAKOM where they discussed the issue at the Zemstvo session. Due to the majority of Georgians and Tatars participating in the sessions anti-Armenian resolutions were adopted.